

տառք յերկրպագութիւն վասակայ... և ի նոյն ժամայն հարեալ զնա ուրազովն ի յաջամէջսն. ժողով արարեալ զամենայն ազգն Հոռոմոց զննեցաւորսն և զհատարքն (էջ 213). Կոտորեաց զամենայն հատարսն առհասարակ (էջ 214). = արաբ. *الحداد* haddād «երկաթագործ»:

Հարամի «աւազակ». Սմիւրայ ոմն ի յաշխարհէն Գանձակայ՝ Խազի անուն, այր արինահեղ, լիբբ և չար հարամի (էջ 348). Անկաւ գրեուկս ի ձեռն հարամեաց (Վրդ. պոմ. էջ 161). = արաբ. *أحرار* harāmī «աւազակ»: Ուղիղ մեկնեց նախ Ալիշան, հրտր. Վրդ. պոմ. անդ, ծան:

Հեծերաւագ «ձիաւոր» հեծեալ զօրքի գլխաւորը. Իսկ նոքա հարին զհեծեկաւագն Վրաց նետիւ ի ձեռն (էջ 425). Բազում արս ցաջս և հեծելօքն զժօսնին կոտորեցին (էջ 357). (երկու ձեռ. զհեծեկաւագն, որ աւելի յարմար է):

Հերձ ի հերձ «պատառ պատառ». Տեսանէին զցամաքային վայրքն, զի պատառեալ հերձ ի հերձ ի բազում տեղիս ահաւոր խորութեամբ (էջ 317):

Հիրս «նենգութիւն». Եւ այլ ոչինչ տանէին, բայց միայն նստեալ խորհէին զչարութիւն, զհիւսն և զամենայն ճանապարհս չարեաց սիրէին (էջ 239). = արաբ. *هيلة* hila (աղաւ. հիլի) «նենգութիւն, խարդախութիւն»:

Զայնատր «երգեցող, տիրացու». Զմեծ երաժիշտն ձայնաւորաց՝ որ մականունն աւի Ալախօսիկ (էջ 216). = Պօլսոյ մէջ մինչև այսօր գործածական է այս իմաստով:

Զմերոց «ձմեռ». Յայսմ ամի եղև դառնաշունչ և զազան ձմերոց (էջ 309):

Ճիկան «զուտաբեր, զուժկան». Յայնժամ ամիրայն Տաճկաց Խուրէշն կապեաց սև նշանակ և մտաւ ճիկան յարապիկը և արար ժողով մեծ և զայր ի վերայ Թուրքին (էջ 99). Եւ յայնժամ գնացին ճիկան առ սուլտանն... և զայս ամենայն ազգ արարին նմա (էջ 256). Սկազգեստուք և բացաւ զխօք ճիկանս լինէին առ սուլտանն իւրեանց (էջ 348):

Շարահակեյի

Հ. ԱճԱՌԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՔ

FR. MACLER. — La France et l'Arménie à travers l'Art et l'Histoire. Paris 1917.

Հայ ազգային գրականութեան և լեզուին վրայ անխնշ աշխատող Ֆրէտէրիք Մաքլէրի այս երկասիրութիւնը ամենայն գնահատանքի արժանի է: Գրքին առաջին մասին մէջ հեղինակը կը յիշէ այն բոլոր հայ նշանաւոր անձերը որոնք Փրանսայի հետ յարաբերութիւն ունեցեր են դարերու զանազան շրջաններու մէջ: Մեր հայ պատմութեան և գրականութեան համար այս նորագիտ ազգիւնները մեծ ծառայութիւն մը մատուցանելու օգտակարութիւնն ունին: Իսկ երկրորդ մասին մէջ կը խօսի Փրանսահայ յարաբերութիւններու վրայ՝ բայց արուեստի տեսակէտով. այսպէս կ'արտատպէ հայ ձեռագիրներու գեղեցիկ պատկերներն և զանոնք բաղդատութեան կը դնէ հայ ձեռագրաց թուականին ժամանակակից լատինականներու պատկերները, որ գրեթէ հայկականներուն ձեռն, ոճն և ճաշակն ունին. ասոր պատճառը կը գտնէ անոր մէջ թէ հայ և լատին մանրանկարիչները դիմած են մի և նոյն ազգիւրին, Բիւզանդական արուեստին: Սեղմ և իմաստալից տողերու մէջ՝ ցուցադրած է հայ արդի երաժիշտներու մեծահամբաւ դէմքերը, ինչպէս կոմիտաս Վարդ. Պապայեանը, Գալանօզը, Ալէքսանեան և ուրիշներ, որոնք ցոյց կու տան թէ հայը որքան առակ է գեղարուեստական այս զգայուն և փափուկ ճիւղին: Ի վերջոյ կ'անցնի յիշելու արդի հայկական նկարչութիւնը և արձանագործութիւնը, որոնց մասին բրած ուսումնասիրութիւնը և հրատարակած պատկերները մեծապէս գնահատելի կը դարձնեն այս հրատարակութիւնը: Մասնաւոր համառօտ կենսագրականներ նուիրած է հայ գանազան համբաւաւոր նկարիչներու և նկարչուհիներու, ինչպէս են Տիկ. Պապայեան, Զաքարիա Զաքարեան, Կարապետ Նշանեան, Արսէն Եւականեան, Ետորո Շահին, Տիգրան Բոլաւոյ, Անդրէաս Տէր-Մարութեան, Յովհաննէս Ախագեան, Աբէլ Մինասեան, Հրանտ Աբանաթ, Տիրան Կարապետեան, Ռափայէլ Շիշմանեան, Յովհաննէս Երիցեան և Հրանտ Եսայանեան: Կը քննադատէ անոնց գեղարուեստական նուրբ ճաշակն և իւրաքանչիւր հեղինակի գործերէն մէկ քան ինձնուներ կ'արտատպէ յօդուածին մէջ: Տպագրութիւնը կատարուած է ընտիր և փայլուն թուղթի վրայ:

CHARLES VOGEL et A. COUMRYANTZ. — Le peuple qui souffre. Paris 1917.

Վերնագրէն ընթերցողը կ'անդրադառնայ որ այս գրքոյը Հայաստանի բազմաշարար ժողովուրդին վրայ կը խօսի. և մասնաւորապէս իր պատմութեան վրայ՝ համառօտ և սեղմ իմաստներով: Հեղինակները ութ գլուխներու մէջ ամփոփած են ազգային պատմութեան գլխաւոր դրուագները, և կը վերջնացնեն՝ հայ անկախութեան և ազատութեան արդար պահանջով: Գիրքը ձօնուած է ազգերու իրաւանց պաշտպան Վիլսոն նախագահին:

INGA NALBANDIAN. — Dans la Nuit, scènes de l'Arménie malheureuse. Paris 1918.

Մեր մասնագրութեան անհամար գէպերուն մէջէն մի քանի պարագաներ են՝ որ գիշերային մթութեան մէջէն ի լոյս կը հանէ Տիկ. Ինկա Նալբանդեան, ծագմամբ տանիմարցացի, բայց միացած սիրով և հոգով հայ ամուսնոյ մը, և որմէ ուսած է սիրել հայիրը: Գրութեան ոճը՝ արտացոլումն է ամենագնիւ և նուրբ զգացումներու, որ կարելի ըլլայ գտնել կնոջ մը սրտին մէջ: Ինքն իսկ հեղինակը կ'ըսէ այս գիրքը գրելուն պատճառը. « Ինչո՞ւ գրեցի այս գիրքը, — ինչ իրաւունքով — իմ իրաւունքս ցաւի իրաւունքն է: Այս ինձ բաւական սուղ արժեք: Կեանքն է, մանաւանդ թէ մահը՝ որ ինձ զայն տուաւ, և ինձ համար օրբզան ժառանգութիւնն է այն ժողովուրդին որ իմ ժողովուրդս եղած էր և որ՝ ամէն օր՝ կը սուգուի աւելի խորապէս արիւնի ծովուն խռովագին ալիքներուն մէջ՝ ուր պիտի անյայտանայ շուտով... իմ դերս կը սահմանափակուի պատմելու ինչ որ տեսայ իմ աչքերովս և կամ լսեցի պատմել: Եւ ինչ որ ես ինքնիստ ապրեցայ: Միայն թէ իմ ապրածիս ամենէն փոքրիկ մաս մը: Գրքին առաջին գլուխները գրուեցան Կ. Պոլսոյ հայկական հիւանդանոցին մէջ, մնացածը Կոբենհակի մէջ... իմ հայրենակիցներս պիտի հասկնան որ այս գրքոյը եղած է ողբ մը, տիուր շնոր մը « Մեր Մայր օր Հայաստանի օրօրերգին»: Օրօրի երգ մը այն երիտասարդ արծիւներուն համար որ ինկան և գեղեցիկ աչքերուն՝ որ փակուեցան »:

Գրքին բովանդակութեան մէջ հեղինակուհին կրցած է դրոշմել սրտազրաւ կերպով մեր բոլոր կրած բարբարոսքը, մեր դառնութեան բաժանը և մեր արեւակից Գողգոթան:

ARCHAG TCHOBANIAN. — La femme arménienne. 1918.

Գրագէտ Արչակ Զօպանեանի բազմահատոր գործերուն շարքին մէջ՝ կը մտնէ նաև այս փոքր հատորիկը, որ կը պարունակէ բանաստեղծին մէկ բանախօսութիւնը, ուր բանախօսի յատուկ ճարտարութեամբ և մեղրանոյշ լեզուով կը պարզէ ունկնդիր ամբօրին առջև հայ կնոջ վէճ, հաւատարիմ, հայրենասէր և պարկեշտ դէմքը. կը յիշէ մեր պատմութեան մէջ անմահացած դիցացն, կրօնասէր իշխանուհիները, նագելի օրիորդները և ամօթխած հարսերը՝ որոնք հայ ցեղին փառքը կը կազմեն: Ի վերջոյ կ'անկախ կէ նաև մեր նոր շրջանին մէջ փայլող բոլոր գրագէտ, նկարիչ, երգիչ կիները և գործիչներու անուններն: Գողգոթի գրքոյկիս մէջ ամփոփուած են զանազան ոտանաւորներ և արձակ բանաստեղծութիւններ քանի մը հայ գրագէտ կիներու, ինչպէս Սրբուհի Վահանեանի « Եկարեմք ի մահ Պէշկիրայեանի », Զապէլ Եսալեանի « Այնտե՞ն Բաղնիքը », Շուշանիկ Կտորիչեանի « Երգերս սիրտի հիւսմամբ », Գրիգոր Նիկողոսեանի հաւաքած « Հայ գեղջուկ մուշրիկ » և առաժնէր և խորհրդայնները, Եղիսաբէթ Սերլէմեանի « Հէպէկ Մուսայի դրուագին պատմութիւնը » և Օր. Ասողիկ Պիգեանի « Հայուհեոյ մը սալապոյկը ». գրութիւններ լի օծմամբ և գլեթալարած շնորհքով. որ մեր գրագէտ իգական դասակարգին կրթուած մոգին և ճաշակին ընտիր նմոյշները կը կազմեն, այն աստիճան որ ֆրանսացի բանաստեղծ հայասէր Ժան Էքարը ասոցմէ մի քանին ոտանաւորի վերածած է, և որոնք հրատարակուեցան ներկայ տարուան Բազմավէպի էջերուն մէջ:

LES ALLIÉS ET L'ARMÉNIE. — Paris 1918.

Բարիգի Հայ Մտաւորական Միութեան անդրանիկ հրատարակութիւնն է այս գրքոյը, զոր կազմած է բազմաբազմ գրագէտ Արչակ Զօպանեան, հաւաքելով մեր դաշնակից մեծանուն բարեկամներուն համակերպի արտայայտութիւնները մեր ազգին և ցեղին հանդէպ: « Յարգանքի և բարեկամութեան ցոյցերու այս փունջը, կ'ըսէ հաւաքողը, յաւիտենապէս պիտի պահուի ազատուած հայ ժողովուրդին՝ իր իր ազգային զանձուն ամենէն թանկագին նշխարներէն մին »:

Գիրքը 1 ֆրանք, որուն հասոյթը պիտի յատկացուի հայ ազդեակներուն:

Մ. ՇԵՐԿԵԱՆ